



## 41. ՍԸԼՏԱՆ ՓԱՐԻՇԱՆ

Ժամանակը թագավորը կեր, ուր իրիք լաճ: Իրիքն էլ խասուկ, հասակ առուկ կիլնին, փսակվիլու:

Թագավորըն էլ ուր լաճիրուն կըսը. - Ձի վի ախչիկ կը պը, տիւք ծոյի խընծուրքիր զարկեցե՛ք վար անու տըռան, իս ախչիկ բիրիմ ծի:

Ծուլ լաճ ուր խընծուր կը զանը վար ուղզոր տըռան, միչնիկ լաճ կը զանը վար մալխո տըռան, պըզտիկ լաճ կը զանը, նանչ կը զանը, կընգը մըկան ծակ վե:

Թագավորը կըսը. - Կայե իմ պըզտիկ լաճ յաղլիլ ը:

Էլմէլ համեն մեկը խընծուրըմ կը տա, կըսը. - Ձի վի ախչիկ կը պը, զանեցե՛ք վար անու տըռան:

Էլմէլ ուրինց խընծուրքիր կը զանին:

Թագավորը ծուլ լաճ ուր խընծուր կը զանը վար ուղզոր տըռան: Միչնիկ լաճ կը զանը վար մալխո տըռան: Կը մընա պըզտիկ լաճ: Ան ընչ կը զանը, կը յա, կընգըն էլմէլ մըկան ծակ վե:

Դիրըմ էլ կը զանին, էլմէլ անկում:

Պըզտիկ լաճն էլ կըսը. - Կայե իմ բախտ ընցնա յը:

Կառնը ըզգոռտ, կը բիրը: Ընչ կը բիրը տուն, գոռտ ուր գոռտընին կը խանը, կիլնը կընիկըմ, ուր չուտիս, չըխըմիս, հինը իրիշկիս: Դայիմ կիլնը, ուր բանիր կանը, էլմէլ ուր գոռտընին կը խագըն, կիլնը գոռտ:

Փելըմ կը մընա, թագավորը լաճ կըսը. - Կընի՛կ, իս զիմ խեր տը բիրիմ պատիվ:

Կընիկ կըսը. - Միրգամահմանտ, խուրզուտ, անիվուտ կուըր-  
բան կիլնիմ, քու խեր մը՝ բիրը պատիվ, քու խեր մի տ՝ իցկը մա  
բնալ:

Միրգամահմանտ կըսը. - Չէ՛, պընենավե իս իմ խեր տը  
կանչիմ:

Ան էլ կըսը. - Վուըր անցկում ը, իս տը մընամ փարտը հիտիվ,  
քու խեր ընչ կը գա, կերակուլ, բան տի՛ր հըրճիվ:

Կըսը. - Չէ՛, անթարգ բան չիլնը:

Կերթա, ըզուր խեր կը բիրը, ան էլ կերթա փարտը հիտիվ:

Կը կան հանտե, խանթար կը տան չուր հանանկան կախ, կըսը.

- Կընիկ, խա՛ց պի իմ խոր:

Կընիկըն էլ տանկավ կընգըն, կը գա, խաց կը բիրը:

Ընչ կը գա հանտե, անցկում խորոտ ը, ուր խոր հաշ կը յա,  
կընգըն հանտե: Անցկում սերտ կը մաշին, ճուր կը թըլին իրիս վե,  
դե՛, դե՛ ջորով ուշկ կը գա վերեն:

Թագավորըն էլ կըսը. - Միրգամահմանտ, յան տը յաս անց-  
կում ջուլըմ բիրիս, ուր իս, իմ անքար հըմեն նըստինք տակ, մի  
ծածկը, տալ հավիլնա, յան քու վիզ տը գանիմ:

Թագավորըն էլ կիլնը, կը յա:

Միրգամահմանտըն էլ մաղտըն կանը, կը նըստե հանտե,  
չըզըտնա՝ ինչ տ՛անը:

Խեր ընչ կերթա, կընիկ կը գա, կըսը. - Միրգամահմանտ, ան  
վըրե՞ մաղտեն արիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հալ-քեֆաթ ընցնա յը, իմ խեր ծյի էսաց՝  
յան ջուլըմ տը բիրիս, ուր իս իմ անքըրով սաղ նըստինք տակ, մի  
ծածկը, տալ հավիլնա, յան քու վիզ տը գանիմ:

Կըսը. - Չէ՞ իս քյի սիցը՝ քու խեր մը՝ կանչը, պիրը մի տուն,  
քու խեր ըզմի տը իցկը բնալ: Կընա՛ հանտե, մանչ տու ծի խանիր  
իս, բիրիր իս, սա՞ Սըլտա՛ն Փարիշան, չըխտ, ան տըսը՝ ան ի՞նչ  
կը իմ փեսեն, տու էլ սա՞ մըհա ան ջուլ քու ախչիկ կուզը: Թը չը-  
կարցար բերեր, ա՞ն նա մատնիկ, մըտո՛ւ քու մատ, ընչ կերթաս  
հանտե, ջուլ կառնիս՝ մատնիկ մա քու մատին օլո՛րը, քանի՛մ ջըն  
կա, հըմեն տը գան հանտե, տըսիմ՝ շինի՛նք, թը՞ ավրինք, սա՞  
մը՛նչ շինիցեք, մը՛նչ ավրեցեք, մընակ նա ջուլ թալցե՛ք մի տուն,  
էկե՛ք:

Ան էլ կիւնը կերթա, իրիք տիր կը կանչը՝ Սըլտա՛ն Փա՛րի-  
շան, Սըլտա՛ն Փա՛րիշան:

Կըսը. - Ան ի՞նչ կը:

Կըսը. - Մըհա՛ ան ԶԻԼ տԻ՛Լ, քԻԼ ախչիկ կուզը:

Ան էլ կը տա, Միրզամա՛հմա՛տ մատնիկ մա՛ ուր մատնին կօ-  
լորը, բուլուկըմ ջըըն կը բա՛հրա՛վին հանտե:

Կըսին. - Ավրի՞նք, թը՞ շինինք:

Կըսը. - Մը՛նչ ա՛վրիցիք, մը՛նչ շինեցեք, նա ԶԻԼ թա՛լցե՛ք մի  
տուն, տարցե՛ք:

Ջըընիր ըզԶԻԼ կը թա՛լին անունց տուն, կը կուրուսին:

Միրզամա՛հմա՛տ ըզԶԻԼ կը տանը, կը փըռը, ուր խեր, ուր  
ազքըրո՛վ կը նըստին վերա, տա՛լ կեսըն կը մընա տա՛ռտակ:

Թա՛գա՛վոր կըսը. - Միրզամա՛հմա՛տ, մըկա կուզիմ քենե սե-  
ղան, ուր անցկում ճԻԼ էլնը, իս իմ ազքըրքիրո՛վ, իմ պա՛րեկա՛մք-  
տիրո՛վ նըստինք բուլուր, թերը անը, տա՛լ չայնըկը, սըմա՛վարը,  
կա՛ղա՛խը, խացը տեղ հա՛վիլնա:

Էլմէլ ծեռքիր կը տընը ծուց, մաղտեն կանը, կը յա տուն:

Կընիկ կըսը. - Էլմէլ ան ի՞նչ իլիր՝ մաղտեն արիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հա՛լ-քե՛ֆա՛թ ընցնա՛ յը: Իմ խեր սեղա՛մ  
կուզը, կըսը՝ անցկում իլնը, իմ ազքըրքիրո՛վ, իմ պա՛րեկա՛մքտիր  
հըմեն շարժին բուլուր, տա՛լ սեղնը վերա, սըմա՛վարը, չայնըկը  
տեղ իլնը, թը չէ՝ քԻԼ վիզ տը գա՛րկիմ:

Կըսը. - Միրզամա՛հմա՛տ, խուըգուտ, ա՛րի՛վուտ կուըրբան  
կիլնիմ, չէ՞ իս քյի սիցը՝ քԻԼ խեր մը՝ բիրը մի տուն, մինք տ՛ընկ-  
նինք բա՛լա: Գընա՛, հանտե ինչ տԻԼ բիրիր իս, սա՞ Սըլտա՛ն  
Փա՛րիշան, Սըլտա՛ն Փա՛րիշան, տ՛ըսը՝ ան ի՞նչ կը իմ փեսեն, սա՞  
մըհա՛ ան սեղան տո՛Լ, քԻԼ ախչիկ կուզը: Չըխտ տը տա, տԻԼ տը  
առնիս, բիրիս: Խարիր տարի մընա, տԻԼ չըս կանա գետնեն  
կըտորը: Հիտ ա՛ռ նա մատնիկ, ընչ կը տամ, մա՛ քԻԼ մատին օլորը՝  
քա՛նի՛մ ջըըն կա, տը գա՛ն հանտե, տ՛ըսին՝ շինի՞նք, թը՞ ա՛վրինք,  
սա՞ մը՛նչ շինեցեք, մը՛նչ ա՛վրեցեք, նա սեղան թա՛լցե՛ք մի տուն,  
քա՛ցե՛ք:

Միրզամա՛հմա՛տ էլ կիւնը, կերթա:

Կերթա վա՛ր ան տեղաց, ընչ ինք ուր կընիկ բերեր էր, իրիք  
տիր կըսը՝ Սըլտա՛ն Փա՛րը, Սըլտա՛ն Փա՛րը:

Կըսը. - Ան ի՞նչ կը իմ փեսեն:

Կըսը. - Մըհա՛ն ան սեղան տո՛ւ, քու ախշիկ կուզը:

Ընչ կը տա, Միրզամահմատ ուր մատնիկ մա՛ ուր մատին կօլորը, ուր կօլորը, քանց աստղը երկինք՝ ջըն կը թափին հատե:

Կըսին. - Քակի՞նք, թը՞ շինինք:

Կըսը. - Մընչ քակեցեք, մընչ շինեցեք, մա՛ սեղան թալցե՛ք մի տուն, քացե՛ք:

Միրզամահմատ ըզսեղան կը տանը, թագա՛վոր ուր ազքըր-քիրով, ուր պարեկամքտիրով կը պահրա՛վին բուլուր սեղան, չայտան ուր թախումով կը տընին վերա, տալ կա՛վիլմա:

Թագա՛վոր կըսը. - Յան ճութըմ անմահական խաղուղ պիրի ծի, յան քու վիզ կը գարկիմ:

Միրզամահմատն էլ մաղտեն կանը, ձեռ կը տընը ծուց, կը յա տուն մա՛ ուր կընիկ:

Կընիկ կըսը. - Միրզամահմա՛տ, ան ի՞նչ իլիր քյի, էլմէլ մաղտեն արուկ իս:

Կըսը. - Խա՛, ուղւա՛, իմ խեր կըսը ծի՛ պընենա՛վե կերթաս, ճութըմ անմահական խաղուղ պիրիս, դե իս դուրո՞ւց տը բիրիմ:

Կըսը. - Չէ՞ իս քյի սիցը՝ քաւ խեր մը՛ բիրը մը տուն, տընգ-նինք բալե՛մ:

Կըսը. - Իլը՛, գընա՛ հանտե, ընչ տաւ ծի խանիր իս, փըշու՛մ գըվը՛ռը վա՛ր աչ թիվին, փըշու՛մ գընա՛, ալզիկ անխալուրմ տաւ տը խիս, պո՛մ նըստը հանտե, իմ քուրիր տը գան: Սա՞ ծի քուր անմահական ճութըմ խաղուղ կուզը:

Կիլնը, կերթա: Կերթա չուր հանտե, կը գըվըռը վա՛ր ալզուտ անխալին, չուր անու քուրիր կը գան:

Կըսը. - Ձի քուր ճութըմ անմահական խաղուղ կուզը:

Հանօր չորոկըշքաթ կիլնը:

Կըսին. - Դու կա՛ց հանտե, չուր ուրբաթ օր մինք կառնինք, կը բիրինք:

Կը մընա հանտե չուր ուրբաթ օր, ուրբաթ օր անունք ճութըմ խաղուղ, անմահական խաղուղ կառնին, կը բիրին:

Կըսին. - Ա՛ռ, տա՛ր, մինք գըտինք՝ տաւ վիր խամար կը տա-նիս, մեկ պըտուղ կիսը՛, կես տա՛ւ կի, կես տա՛ւ քաւ կընգան, մեկէլըն տա՛ր, տո՛ւ անու:

Կառնը, կերթա: Կերթա տուն, պըտուղըմ կը կըտորը, կես ինք  
կուտը, կես կը տա ուր կընգան, ան մեկէլըմ էլ կը տանը թագա-  
վորին:

Թագավոր կուտը, կը պըրծնը, կըսը. - Հա՛, հա՛, Միր-  
գամահմա՛տ, իմ ֆինոկ ընչ քու մեր մեռավ, տըրած անու գըլոխ,  
տարած, խուրած, կերթաս կը բիրիս, թը չէ՞ մըկա քու վիզ տը  
գանկիմ:

Կիլնը, մաղտեն արուկ կը գա տուն՝ մա կընիկ:

Կընիկ կըսը. - Միրգամահմա՛տ, խուըգուտ, արիվուտ մեռ-  
նիմ, չուր մըկա տու տայիմ մաղտեն արուկ կը գեր տուն, լա մորե  
չը՞ր իլա, ան քի ի՞նչ իլիը ը, կը լաս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իմ խեր ծյի ընցնա էսաց:

Կըսը. - Չէ՞ իս քի սիցը՝ քու խեր մը՝ բիրը մի տուն, մի տից-  
կը բալա:

Շատ շիրաթ կանը Միրգամահմատին, Միրգամահմատ կը  
յա, վար ճամխի՛մ կը տեսնա քիշկ ու սարե՛մ գի հանտե, անու  
նըվընքտիր իլիը, տըվիր հանիք: Մարթ մ'էլ ան սարը մոտ նըստեր  
էր վար ծյան:

Էսաց. - Հա՛յ, մա՛րթ, վըրե՞ ատ հըմեն նըվին գի մա ատ սա-  
րին, տու նըստիր իս վար ատ պաղ ծյան:

Կըսը. - Գընա՛, արը՛, քի սիմ:

Կերթա, տեղըմ էլ կը տեսնա մարթըմ գի հանտե, քըսան  
տաշտ խաց շարիր ատե, կըսը. - Յամա՛ն, իս անուըը մեռա:

Կըսը. - Վըրե՞ ատ հըմեն խաց տեգիր իս հանտե, կըսիս՝  
անուըը մեռա:

Կըսը. - Գընա՛, արը՛, քի սիմ:

Կերթա, տեղըմ էլ կը տեսնա մարթըմ աշչը յը, միս կը ծախը,  
կըսը. «Յաման, մըկա փըշու՛մ միս էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Վըրե՞ տու ատ հըմեն միս կիփիս, կը թալիս կը թա-  
փիս, կըսիս՝ մըկա փըշու՛մ միս էլներ, իս ուտեր:

Կըսը. - Գընա՛, արը՛, քի սիմ:

Փըշու՛մ էլ կերթա, կը տեսնա մարթըմ խաց-պանիր տըրիր  
վար ուր գըլխուն, կը ծախը, կըսը. «Յաման, փըշու՛մ խաց-պա-  
նիր էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Վըրե՞ ան խաց-պանիր տըրիր իս վնար քու գըլխուն,  
կը ծախիս, կըսիս՝ փըշու՛մ խաց-պանիր էլներ, իս ուտեր: Հանձն  
հանձըր կյի:

Կըսը. - Գընան՝, արը՝, քյի սիմ:

Կէրթա, տեղըմ կը խը՝ մարթըմ քնաբաբ կը շինը, կը ծախը,  
խիտ կըսը. «Ա՛խ, մըկա քնաբաբըմ էլներ, իս ուտեր»:

Կըսը. - Գո հանտե, հանձն հանձըր շինը, կյի՛:

Կըսը. - Գընան՝, արը՝, քյի սիմ:

Կէրթա տեղըմ, կը խը՝ կընիկըմ չըփլախ կսվու ուղսկըրքիր  
կայնացըցիր հանտե, կը կըթը, կըսը. «Ա՛խ, մըկա պուտըմ կաթ  
էլներ, իս խըմեր»:

Կըսը. - Չէ՞ գո ան կսվ, խանգար հըմեմ ուղսկուր ը, ինչ կը  
կըթիս, հանձն ան քու բերամ:

Կըսը. - Գընան՝, արը՝, քյի սիմ:

Գնագամ էլ կէրթա, կը տեսնա՝ մարթըմ էրկու աման առիր,  
ճուր կը կըրը, կըսը. «Յաման, իս ծարվո մեռա»:

Կըսը. - Չէ՞ տու գո ճուր կը կըրիս, ան վըրե՞ ճուր կուզիս:

Ան էլ կըսը. - Գընան՝, արը՝, քյի սիմ:

Գընաց տեղըմ, տեսավ՝ պապիկըմ նըստիր իրիք ճամխը  
խառնուրդ, սիվ թիլ կանը կըծիք:

Կըսը. - Պապիկ, ան ի՞նչ կանիս:

Կըսը. - Զն չէ, գիշիր, ցերեկ կը չափիմ:

Կըսը. - Պապիկ, նա նըրքըմ ճամբախ կը տանը դո՞ր:

Կըսը. - Ատ խանյու ճամբախն ը, կը տանը տժոխք, արքն-  
վութիմ:

Կըսը. - Նա կես տեղուն ը՞նչ կը ճամբախ ը:

Կըսը. - Ան քըրտուն ը:

Կըսը. - Նա վըրը՞ն ընչկը յը:

Կըսը. - Ան տաճկուն ը:

Կը տա քըրտու ճամբախ վե, կը յա: Շատ գընաց, քիչ  
գընաց, գընաց վնար տժխուց տըռան կայնավ:

Կանչից. - Մարե՛, մարե՛, մարե՛:

Մեր ճըհաբ իտու, էսաց. - Միրգամանհմանտ, խուըգուտ, անի-  
վուտ կուըրբան իլնիմ, ա՛րը ըստան, ա՛րը ըստան:

Էլավ գընաց, մեր էսաց. - Միրգամանհմանտ, քու բան ինչ կը  
ըստան, տու վըրե՞ իկիր իս:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, հալ-քեֆաթ ընցնա՛ յը, իմ խեր ծի հո-  
րողկիր, ա՛ն ֆիմոկ ընչ տըրաժ քու գըլոխ, տանիմ, ա՛ն կուզը:

Կըսը. - Ա՛ն ֆիմոկ, հա՛, ա՛ն փըտիր ը մա մա կաթըլքին, ա՛ռ,  
մառիկ տար, լա տու քու ծեմնով տի՛ ա՛նու գըլոխ, վուըր տու  
չըտընիս, սերը յը, ա՛նու սերին տը բա՛տը:

Կըսը. - Մըկա ըստա՛ մընակ կաթիլ էլներ, թըխ կաթեր, մըկա  
ըստա՛ մընակ մուք էլներ, թըխ մուք էլներ, լա Միրզամախմատ,  
խուըգուտ, ա՛րիվուտ մեմնիմ, կը տանիս, ժա՛մ մ'էլ արա ծի, մա  
կաթիլք թըխ կըտըրը:

Կառնը կը գա՛, կը գա՛ մա պապիկ:

Կը գա՛ մա պապիկ, կըսը. - Պապի՛կ, ա՛ն վըրե՞ իս գա՛ցը, տու  
նըստըր էր ըստա՛, տու սիվ թիլ կը չափեր, իս իկը ըստա՛, տու էլմէլ  
նըստիր իս ըստա՛, սիվ թիլ կը չափիս, կանիս կըծիք:

Կէրթա մա ճուր բերող, կըսը. - Ա՛ն վըրե՞ տու հա՛նօր ճուր կը  
բերեր, կըսեր՝ յամա՛ն, իս ծարվո մեռա:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, օրըմ մարթըմ իմ մոտեն ճուր ուզից, իս  
սիցը՝ քու բերան խարամ ը, ճուր չըտըվը խըմեր, մըկա ա՛ն իկիր  
իմ վուըտ: Իս գիշիր-ցերեկ ճուր կը կըրիմ, լա չըն թըղնը՝ իս  
խըմիմ:

Կէրթա մա կիվ կըթող, կըսը. - Վըրե՞ տու ա՛ցկուն կըսեր:

Կըսը. - Ձի յոթ կիվ կեր, իմ տըրկըցին մեկ, իս ճուր կը լըցեր  
հինը, կը տաներ, կը տեր ա՛նու փուխ, մըկա մա էն ը՝ կը գա՛ իմ  
վուըտ: Իս տա՛ իմ կիվ կըթիմ, լա չըն թըղնը իս կաթ խըմիմ:

Գընա՛ց մա քաբաբ շինող, էսաց. - Վըրե՞ տու հա՛նօր ա՛նց-  
կուն կըսեր:

Կըսը. - Իս քաբաբ կը շիներ, կուտեր, ինչըխ ուզեր, ա՛նցկուն  
կաներ, օրըմ մարթըմ իրը, ծենե քաբաբ ուզից, իս սիցը՝ ապա՞  
մըկա իս քաբաբ տը տամ քի, մըկա հա՛սօր էն ը՝ կը գա՛ իմ վուըտ,  
իս հա՛մեն օր քաբաբ կը շինիմ, լա չըն թըղնը՝ իս ուտիմ:

Գընա՛ց մա խաց-պանիր ծախող, էսաց. - Ա՛ն վըրե՞ տու  
հա՛նօր ա՛նցկուն կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս իմ քեֆովն էր, ուզեր՝ խաց-պանիր  
կը ծախեր, չուզեր՝ ծի խա՛մա՛ր պարապ կը մըներ: Մընաց օրըմ  
խիվանդ, շիվարըմ իրը իմ մոտ, փըրտուճըմ խաց-պանիր ուզից,  
իս չըտըվը, մըկա էն ը՝ կը գա՛ իմ գըլոխ, իս չուր հիրիկուն խաց,  
պանիր կը ծախիմ, լա փըրտուճըմ խաց-պանըրը խասրաթ իմ:

Դորիս գընաց մա միս էփող, էսաց. - Ան վըրե՞ տաւ անցկում կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս հըմեն օր միս-մըսեղեն կէփեր, օրըմ խեղճ մարթըմ իրը, իմ մոտեն փըշու՛մ միս ուզից, իս չըտըվը, մըկա ան մեղքն ը՛ կը գա՛ իմ վուըտ: Իս օր չուր հիրիկուն աշ-չուքին կանիմ, փըշու՛մ կերակուր չըն թըղնը իս ուտիմ:

Անտուց կերթա մա հացթուխ, կըսը. - Ան օր վըրե՞ տաւ անցկում կըսեր:

Կըսը. - Իս խաց կը թըխեր, օրըմ աղքատըմ իրը, իմ մոտեն խաց ուզից, իս չըտըվը, մըկա ան մեղքն ը՛ կը գա՛ իմ վուըտ: Իս լուսնա չուր հիրիկուն խաց կը թըխիմ, փըրտուճըմ խաց չընկնը իմ ծեռ:

Կերթա մա խալվուր մարթ, կըսը. - Վըրե՞ տաւ հանօր անցկում կըսեր:

Կըսը. - Խա՛, ուըլա՛, իս տուվաթուր էր, իմ ջըլիրու տեղ, ընցնա ինչ կը խիս, էլեկ էր խա հանգին, օրըմ ճամբուրթ մարթըմ իրը, տեղըմ ուզից, իս սիցը՝ ապա՞՝ մըկա իս քյի լըխեֆ-տաշակ տը տամ, հըմեն իլնը վուըճիլ, մըկա անու մեղքն ը՛ կը գա՛ իմ վուըտ: Իս նըստիիր իմ վաթ մա ծյան, ան լըխեֆ-տաշկըտիիր հըմեն տիգած հանտե, ինչըխ կանիմ, չըն թըղնը մեկ առնիմ, թըլիմ իմ տակ:

Ֆաս կառնը, կը գա՛ տուն: Կը գա՛, կը յա մա ուր խեր:

Կըսը. - Կակո՛, ուըլա՛, իմ մեր կըսեր՝ անու ֆաս փըտիիր ը, լա նարիկ իտու ձիկ, իս առը, բիրը, մըհա բի՛, տընիմ քու գըլոխ, մըհա քյի կը կըպը:

Թագավոր ընչ ծեռ իտու, տը առներ, էսաց՝ թուխ իս տընիմ քու գըլոխ:

Ընչ իտը ուր խոր գըլոխ, խեր գընտըռ-մընտըռ կըլուրվավ, իրը տակ:

Ուըլա՛, թագավոր հար մեռավ:

Նուր Միրզամահմատ ժամ արավ ուր մոր խամար, անու կաթիլք փըշու՛մ կըտրավ:

Անունք խասան ուրից մըրագին, դուք էլ խասսեք ձի մըրագին: